<ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ> ԲԲԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ Հ.3Խ-22

ք. Երևան, Արշակունյանց պողոտա 12 07.11.2022թ., ժամը 11:00

Նիստին ներկա էին՝ խորհրդի 8/ութ/ անդամներից 7/յոթը/՝ Շիրինյան Հ. Ռ. /խորհրդի նախագահ/, Մաթևոսյան Է. Հ., Մինասյան Մ. Հ., Երոյան Տ. Ս., Հակոբյան Ն. Խ., Ղազարյան Գ. Գ., Եփայան Հ. Լ.: Բացակայում էր Է. Գ. Գրիգորյանը մահվան պատճառով:

Նիստի օրակարգը՝

- Ընկերության գործադիր տնօրենի ընտրությունը
- Այլ հարցեր:

Նիստը բացեց խորհրդի քարտուղար Ն. Խ. Հակոբյանը:

Նա առաջարկեց հոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգել մեր ընկերոջ, վաղաժամ հեռացած և երկարամյա գործադիր գլխավոր տնօրեն՝ Էմիլ Գուրգենի Գրիգորյանի, հիշատակը: Տնօրենների խորհրդի անդամները մեկ րոպե լռությամբ հարգեցին գործադիր գլխավոր տնօրեն՝ Էմիլ Գուրգենի Գրիգորյանի հիշատակը:

Խորհրդի քարտուղար Ն. Խ. Հակոբյանը ձայնը տվեց Ընկերության խորհրդի նախագահ Հ. Ռ. Շիրինյանին:

Ելույթ ունեցավ խորհրդի նախագահ Հ. Ռ. Շիրինյանը:

Նա առաջարկեց գործադիր գլխավոր տնօրենի պաշտոնում հաստատել խորհրդի անդամ, տեխնիկական գծով ղեկավար և ժամանակավոր պաշտոնակար՝ Տիգրան Սամվելի Երոյանին, որը վերջին տարիներին Էմիլ Գուրգենի Գրիգորյանի բացակայության ժամանակ փոխարինում էր գործադիր գլխավոր տնօրենին:

Ձայնը տրվեց խորհրդի անդամ, տեխնիկական գծով ղեկավար և ժամանակավոր պաշտոնակար Տ. Ս. Երոյանին:

Նա ներկայացրեց իր աշխատանքային ուղին Ընկերությունում:

Ընկերությունում աշխատանքի ընդունվել է 2010թ. սեպտեմբերին, որպես դրոշմող բանվոր, 2011թ. ապրիլին տեղափոխվել է ժամացույցների և հուշամեդալների տեղամաս, որպես թվածրագրային կառավարման հաստոցների օպերատոր, հաստոցի սպասարկող: Հաշվի առնելով մասնակցությունը նորագույն տեխնիկական և տեխնոլոգիական խնդիրների լուծումներին ոսկյա, արծաթյա և կերամիկական իրերի ասպարեզում 2021թ. հուլիսի 1-ից նշանակվել է տեխնիկական գծով ղեկավար: 2022թ. հունիսի 17-ից նշանակվել է որպես գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: Խորհրդի անդամ Տ. Ս. Երոյանը միաժամանակ ներկայացրեց իր կրթության վերաբերյալ: Երևանի թիվ 13 Թելմանի անվան միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո 2003-2005թթ. ծառայել է ՀՀ բանակում: 2007թ. ստացել

է ատամնատեխնիկի որակավորում, իսկ 2017թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը, ստանալով բակալավրի աստիճան մեքենաշինության և նյութերի մշակում մասնագիտությամբ:

Ելույթ ունեցան խորհրդի անդամներ՝ Մաթևոսյան Է. Հ. և Մինասյան Մ. Հ., որոնք ներկայացրեցին Տ. Ս. Երոյանին, որպես գիտակ մասնագետ ոսկերչական ոլորտում, և պաշտպանեցին նրա թեկնածությունը գլխավոր տնօրենի պաշտոնում:

Խորհրդի անդամ՝ Տիգրան Սամվելի Երոյանի, գլխավոր տնօրենի պաշտոնում ընտրության հարցը դրվեց քվեարկությանը:

Բաց քվեարկությամբ 7 /յոթ/ կողմ Տիգրան Սամվելի Երոյանն ընտրվեց Ընկերության գործադիր գլխավոր տնօրեն:

Որոշեցին.

1. Տիգրան Սամվելի Երոյանին նշանակել գլխավոր տնօրենի պաշտոնին:
2. Նշանակել ամսական աշխատավարձ 600,000.00 ՀՀ դրամ:
3. Կադրերի կառավարման փոխտնօրեն Արմինե Գևորգի Ժամհարյանին երկու օրվա ընթացքում պատրաստել համապատասխան պայմանագիրը և համատեղ գլխավոր հաշվապահ Ազատուհի Սերյոժայի Մակարյանի հետ համատեղ պատրաստել համապատասխան փաստաթղթերը հանձման/ընդունման ակտի վերաբերյալ:
4. Նորանշանակ Գլխավոր տնօրենի պաշտոնում Տ. Ս. Երոյանին մեկ ամսվա ընթացքում ներկայացնել Ընկերության կառուցվածքը, երկու տարվա աշխատանքային ծրագիրը խորհրդի քննարկմանը և հաստատմանը:

Խորհրդի նախագահ Շիրինյան Հ.Ռ.

Խորհրդի անդամներ Երոյան Տ. Ս.

Մաթևոսյան Է. Հ.

Մինասյան Մ. Հ.

Ղազարյան Գ. Գ.

Հակոբյան Ն. Խ.

Եսայան Հ. Լ.